«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները.

1.1.1. Ընկերություն՝ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ,

1.1.2. Դեմո հաշիվ՝ Ընկերության ներդրումային հարթակից անվճար 14 օրով օգտվելու հնարավորություն տվող հաշիվ, որ վրա կա ոչ իրական՝ դեմո գումար,

1.1.3. Մասնակից՝ Ընկերության կողմից կազմակերպվող գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններին համապատասխանող չափահաս ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ,

1.1.4. Կանոններ՝ Ընկերության կողմից կազմակերպվող գովազդային վիճակախաղի կանոններ,

1.1.5. Հրաշալի յոթնյակ՝ Microsoft, Apple, Nvidia, Alphabet (Google), Amazon, Meta Platforms և Tesla ընկերություններ:

2. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

2.1. Ընկերությունը իր մարքետինգային ռազմավարության շրջանակներում կազմակերպում է գովազդային վիճակախաղ (այուհետ՝ Վիճակախաղ): Վիճակախաղը տեղի է ունենալու 04.10.2024 թ-ից մինչև 06.10.2024 թ-ը ներառյալ:

2.2. Վիճակախաղի ընթացքում Մասնակիցների մեջ խաղարկվելու է Հրաշալի յոթնյակից ընդհանուր 3 (երեք) բաժնետոմսեր՝ յուրաքանչյուր օրվա համար 1 (մեկ) բաժնետոմս (այսուհետ՝ Շահում):

3. ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

3.1. Մասնակիցը տալիս է իր անհետկանչելի համաձայնությունը Կանոններին:

3.2. Կանոնները կրում են հրապարակային բնույթ և Վիճակախաղի ողջ ընթացքում հասանելի են Ընկերության կայքեջում՝ https://apricotcapital.am:

3.3. Ընկերությունը իրավունք ունի կատարել փոփոխություն Կանոններում, ընդ որում Կանոններում ցանկացած փոփոխություն ավտոմատ հասանելի է դառնում Մասնակցի համար Ընկերության կայքեջում `https://apricotcapital.am:

3.4. Կանոնների փոփոխությունները համարվում են համաձայնեցված Մասնակցի հետ, եթե վերջինս չի դադարեցնում Վիճակախաղի իր մասնակցությունը:

3.5. Մասնակիցը տալիս է Ընկերությանը Վիճակախաղի շրջանակներում իր անձնական տվյալների հավաքագրման, օգտագործման և մշակման իր անհետկանչելի համաձայնությունը:

4. ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Վիճակախաղի Մասնակից դառնալու համար մասնակիցը պարտավոր է միաժամանակ համապատասխանել ստորև նշված բոլոր չափորոշիչներին.

4.1.1. 04.10.2024 թ-ից 06.10.2024 թ-ը ժամը 18:00-ն ներառյալ Ընկերության կայքի միջոցով լրացնել դեմո հաշվի բացման հայտ և մինչև 11.10.2024 թ-ը ներառյալ դեմո հաշվով կատարել հետևյալ գործարքները`

i. Գնել մեկ բաժնետոմս

ii. Գնեք մեկ ETF

iii. Վաճառել մեկ բաժնետոմս

4.1.2. լինել 18 (տասնութ) տարին լրացած ֆիզիկական անձ

4.1.3. լինել ՀՀ քաղաքացի

4.2. Վիճակախաղի Մասնակից չեն կարող հանդիսանալ`

4.2.1. Ընկերոության աշխատողները և նրանց մերձավոր ազգականներ՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը,

4.2.2. Արդեն իսկ Ընկերությունում բրոքերային հաշիվ ունեցող անձինք,

4.2.3. Նախկինում Ընկերությունում բրոքերային հաշիվ ունեցած անձինք,

4.3. Գրանցվելիս լրացված անձնական տվյալները պետք է համապատասխանեն մասնակցի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթում նշված տվյալների հետ, հակառակ դեպքում նա հնարավորություն չի ունենա դառնալ Մասնակից:

5. ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՇԱՀՈՒՄԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Շահող Մասնակիցները որոշվելու են պատահականության սկզբունքով՝ pickerwheel ծրագրի միջոցով։

5.2. Վիճակախաղի արդյունքները ամփոփվելու են Վիճակախաղի անցկացման օրը՝ 14.10.2024թ -ին։ Շահող մասնակիցները ստանալու են շահումը հաստատող էլեկտրոնային նամակ և/կամ զանգ։ Վիճակախախում չշահած մասնակիցներին Ընկերությունը ծանուցում չի ուղարկում։5.3. Ընկերությունը պարտավորվում է Շահումը փոխանցելն Կանոնների 5.1 կետի համաձայն շահող ճանաշված Մասնակցի՝ Ընկերությունում բացված բրոքերային հաշվին՝ համապատասխան բրոքերային հաշիվը բացելու և Շահումի հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրվելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում։

5.4. Նույն Մասնակիցը Վիճակախաղի արդյունքում կարող է շահել ոչ ավել քան 1 (մեկ) բաժնետոմս։